

13 մարտի 2018թ.

Թիվ 01/1-64

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Արթուր Զավադյանին

Չարգելի պարոն Զավադյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ
Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական
փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 2 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝



Հակոբ Անդրեասյան

Տեղեկացնում ենք, որ 14.03.2018թ.-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը (AMACBAB22ER8, ACBAB2), ցուցակվելու և ընդգրկվելու են պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև թույլատրվել է դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը: Երկրորդային շուկայում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելիության ապահովման նպատակով շուկա ստեղծողի գործառնություններն իրականացնում է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ:

Կից ներկայացնում ենք «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկվելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի 2018 թվականի մարտի 7-ի թիվ ՑՊ-005-03/18 որոշումը:

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2018 թվականի N ՑՊ-005-03/18

ք. Երևան

**«ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի փետրվարի 28-ի հայտը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9.2% եկամտաբերությամբ, 10,000 (տասը հազար) հատ անվանական պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի մարտի 6-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. «ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9.2% եկամտաբերությամբ, 10,000 (տասը հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMACBAB22ER8 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ACBAB2 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 14-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**